

*ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ**Պատմական գիտությունների դոկտոր*

**ԳՈԿՏՈՐ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՄԻՈՒՄԻ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ
ԵՎ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ Ի ՆԱՅՏ ԵԿՈՂ ԻՐԱՐԱՄԵՐԺ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ՝
ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

Յոհաննես Լեփսիուսի մարդասիրական, հրապարակախոսական և հասարակական-քաղաքական գործունեությունը վերջին տարիներին Գերմանիայում ևս զգալի հնչեղություն է ձեռք բերել: Պաշտոնական Գերմանիայի կողմից այն իր գնահատանքն ու ճանաչումը ստացավ մասնավորապես հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական Բունդեսթագի՝ 2005 թ. հունիսի 15-ին ընդունված բանաձևում, որտեղ բառացիորեն նշված է. «Գերմանական Բունդեսթագն իր հարգանքի տուրքն է մատուցում այն բոլոր գերմանացիներին և թուրքերին, որոնք դժվարին հանգամանքներում և հակառակ իրենց այն ժամանակվա կառավարության դիմադրությանը: խոսքով և գործով նվիրվել են հայ կանանց, տղամարդկանց և երեխաների փրկությանը: Առանձնապես դր. Յոհաննես Լեփսիուսի գործը, որը եռանդով և ազդու կերպով պայքարել է հայ ժողովրդի վերապրման համար, պետք է մոռացումից դուրս բերվի և հայ, գերմանացի և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունների բարելավման իմաստով խնամվի ու պահպանվի»:

Ի ճանաչումն Լեփսիուսի անմնացորդ հայանվեր մարդասիրական գործունեության, գերմանական կառավարությունն այնուհետև վճռեց 300 000 եվրո հատկացնել Պոտսդամում գտնվող Լեփսիուսի առանձնատան վերանորոգման համար, որն այնուհետև պետք է դառնար հայոց ցեղասպանության հիշման, գիտական հետազոտությունների անցկացման և հայ-գերմանական մշակութային միջոցառումների իրականացման վայր, ապահովվել հարուստ գրադարանով և այլն: Ավելորդ է ասել, թե այս հանգամանքը ինչպիսի վայմասուն առաջացրեց Գերմանիայի և Թուրքիայի թուրք ազգայնական շրջաններում, որոնք զանազան բողոքներով և հերյուրանքներով ամեն կերպ փորձում էին բեկանել կառավարության որոշման կենսագործումը: Ինչպես Գերմանիայի Արտգործնախարարության պետքարտուղար Գերնոթ Էրլերն է վավերացրել իր պաշտոնական տեղեկություններից մեկում, մինչև իսկ թուրքական կառավարությունն է իր մտահոգությունն արտահայտել Լեփսիուսի առանձնատունը վերոնշյալ նպատակներով օգտագործելու կապակցությամբ:

Երբ գերմանացի հրապարակախոս Վոլֆգանգ Գուստը զանգվածային մամուլում և զանազան ինտերնետային կայքերում հրապարակումներ կատարեց Լեփսիուսի կողմից 1919 թ. հրատարակված «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» վերնագիրը կրող գերմանական դիվանագիտական տեղեկագրերի ժողովածուում տեղ գտած կրճատումների և փոփոխությունների մասին, դա դարձավ հիմնական շարժառիթ Լեփսիուս մարդա-

սերին վարկաբեկելու և ըստ այդմ մաս կառավարության որոշումը վիճարկելի և սխալ համարելու համար: Գուստը, որն, ի դեպ, գերազանցապես անտեղյակ է Լեփսիուսի հումանիստական և հասարակական-քաղաքական գործունեության պատմությանը, այդ առնչությամբ այն պնդումն է արտահայտել, որ Լեփսիուսը գերմանական Արտգործնախարարության հանձնարարությամբ փաստաթղթերում կատարած կրճատումներով և փոփոխություններով փորձել է ամեն կերպ կոծկել հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցությունը: Բառացի հղում եմ նրա «Մոզական քառանկյուն» հոդվածից «...դրանք կատարվել են որոշակի մեթոդով, ... հանվել են ցեղասպանության խնդիրների առնչությամբ գերմանական կայսրության քաղաքականությանը վերաբերող կարևոր մատնանշումները, գերմանական մեղսակցությունը, մաս գերմանացի սպաների մասնակցությունը հայերի հալածանքներին»¹:

Այդ սենսացիոն «հայտնագործությանն» առավելագույն կշիռ տալու և դրա միջոցով մաս Լեփսիուսի պատմական դերի վերագնահատմանը հասնելու հրապարակախոսական գայթակղությունը Գուստին այնուհետև դրդել է շարունակել զարգացնել իր տեսակետը՝ մատնանշելով, որ Լեփսիուսը, ունենալով ծայրահեղ հակաթուրքական դիրքորոշում, եղել է մաս աջ ծայրահեղական թեքում ունեցող հակադեմոկրատ, պատկանել է գերմանացի գեներալ, հետագայում Հիտլերի մերձավոր Էրիխ Լուդենդորֆի միջավայրին, մինչև իսկ հարել է հակասեմիտական ռասայական գաղափարներին և մշտապես, մաս Վայմարյան Հանրապետության շրջանում եղել է գերմանական մեծ կայսրության ջատագով:

Եթե մկատի առնենք, որ Լեփսիուսը տասնամյակներ շարունակ միանշանակորեն դիտվել է որպես մեծագույն մարդասեր և հայ ժողովրդի անմնացորդ դատապաշտպան, ապա ինքնին հասկանալի է, որ նրա գործունեության վարկաբեկումը թուրք պատմագրության կողմից պետք է ընկալվեր մաս որպես նրա կողմից հետապնդված հայ դատի վարկաբեկում, և պատահական չէ, որ թուրքական կողմը, ի դեմս գերմանաբան պատմաբան Կեմ Օզգունուլի, անմիջապես որդեգրեց այդ տեսակետները՝ իր հերթին որևէ առիթ բաց չթողնելով դրանք հանգամանակից վերարտադրելու համար:

Ցավալի է, որ Գուստի կողմից արտահայտված պնդումները միանշանակորեն, անքննադատ կերպով ընդունել է մաս Բուդեթթագի «Ջախեր» խմբակցությունը, որն այս տարվա հուլիսին իր ներքին քաղաքական հարցերով զբաղվող աշխատակցուհու՝ Ուլլա Յելպկեի միաձայնությամբ ու ակտիվ աջակցությամբ «Փոքրիկ հարցում» անվանումը կրող մի հայտ ուղղեց դաշնային կառավարությանը: Դրանում մի կողմից ափսոսանք արտահայտելով այն առնչությամբ, որ կառավարությունը, բացի Լեփսիուսի առանձնատանը վերաբերող վերոնշյալ ձեռնարկումից, ուրիշ ոչինչ չի արել հայոց ցեղասպանության հիշումը, հունիսի 15-ի բանաձևում ամրագրված՝ հարցին առնչվող այլ կետերը պատշաճ կերպով իրականացնելու համար, և մյուս կողմից՝ կառավարությանը ներկայացնելով Լեփսիուսին վերաբերող Գուստի տեսակետները՝ խմբակցությունը միանգամայն վիճարկելի էր համարում Լեփսիուսի առանձնատանը վերաբերող կառավարության վերոնշյալ հանձնառության պատշաճությունն ու հիմնավորվածությունը:

¹ Տե՛ս ինքեթն. ցանցում **Gust W.**: Magisches Viereck. Johannes Lepsius, Deutschland und Armenien.

Հուլիսի 27-ին Արտգործնախարարության պետքարտուղար Գերնոթ Էրլերը Բունդես-թագի նախագահ Նորբերտ Լամերտին ուղարկեց դաշնային կառավարության պատաս-խանը «Ձախեր» խմբակցության հարցման առնչությամբ, որտեղ մասնավորապես նշվում էր, որ Լեփսիուսի առանձնատանը ճիմնվելիք հաստատությունը իր խնդիրը պետք է դարձնի նաև Լեփսիուսի անձի հետ կապված բոլոր վիճահարույց հարցերի ուսումնասի-րությունը, իսկ առանձնատան վերանորոգման խոստացված ֆինանսավորումը առկա-ված է մինչև այդ ֆինանսների օգտագործման վերաբերյալ Բրանդենբուրգի երկրամասի և դաշնային կառավարության միջև համաձայնության կայացումը:

Չնայած կառավարությունը, ինչպես վկայում է վերոնշյալ պաշտոնական պատասխա-նը, «Ձախեր» խմբակցության կողմից արտահայտված նկատառումները միանշանակորեն ճիշդ չի համարել Լեփսիուսի առանձնատան կապակցությամբ իր ստանձնած նախաձեռ-նությունից հրաժարվելու համար, այնուամենայնիվ, ինքնին հասկանալի է, որ այդ վար-կաբեկիչ քարոզչության հետևանքով Լեփսիուսի առանձնատունը հայոց ցեղասպանությ-յան հիշման վայր դարձնելու կառավարական նախաձեռնությունն էապես վտանգված է: Գա արձանագրել է նաև «Ձախեր» խմբակցությունն իր հուլիսի 29-ի մամլո հաղորդագ-րության մեջ, իսկ «Junge Welt» պարբերականն իր հուլիսի 30-ի համարում հայտարարում է, որ դաշնային կառավարությունը հայոց ցեղասպանության հիշման վայր ստեղծելու համար մեծարում է մի աջ ծայրահեղական թեքում ունեցող հակադեմոկրատի, Վայմար-յան Հանրապետության հակառակորդի և պատմության կեղծարարի ու այդպիսով ընդհա-նուր առմամբ վտանգում է նաև հայոց ցեղասպանության հիշումը:

Այս ամենը մենք վկայակոչեցինք ամբողջական պատկերացում տալու համար ներկա-յումս Լեփսիուսի դեմ ծավալվող կրքոտ քարոզարշավի և դրա փաստացի ու հնարավոր հետևանքների մասին, իսկ այժմ կկամենայինք քննական լուսաբանման ենթարկել այն հարցը, թե ինչ կովաններ են փորձում օգտագործել Լեփսիուսի քննադատները, և դրանք ինչ չափով են հավաստի կամ հիմնավոր:

Եթե փորձենք ի մի բերել այն՝ այսպես կոչված հիմնավորումները, որոնցով կատար-վել և կատարվում է Լեփսիուսի մարդասիրական ու հասարակական-քաղաքական գոր-ծունեության վարկաբեկումը, ապա կտեսնենք, որը դրանք գերազանցապես վերաբերում են Լեփսիուսի ժողովածուում տեղ գտած կրճատումների և փոփոխությունների հանգա-մանքին, որոնք, ըստ Լեփսիուսի քննադատների, նա կատարել է հայոց ցեղասպանությ-յան հարցում Գերմանիայի մեղսակցությունը կոծկելու նպատակով:

Այն, որ Լեփսիուսի հրատարակած փաստաթղթերում կատարվել են զգալի քանա-կությամբ կրճատումներ և փոփոխություններ, փաստ է, և դա Հայաստանում հայտնի է դարձել ավելի վաղ, քան Գերմանիայում: Լեփսիուսի հրատարակած փաստաթղթերի և դրանց ամբողջական օրինակների համեմատական քննությունը, սակայն, ցույց է տալիս, որ կրճատումների և փոփոխությունների՝ Գուտտի կողմից կատարված մեթոդական դա-սակարգումն ու մեկնաբանությունները միանգամայն անհիմն են և իրականությանը չեն համապատասխանում:

Եթե փորձենք Լեփսիուսի կատարած կրճատումներն ու փոփոխությունները, որոնք ի-րականում խիստ բազմաբնույթ են, մեթոդաբանական դասակարգման ենթարկել, ապա

պարզ կդառնա, որ դրանցում մեծ թիվ են կազմում հայերի հակապետական, հեղափոխական ձգտումների, դավաճանությունների և դասալքությունների վերաբերյալ թուրքական պաշտոնական քարոզչության ազդեցությամբ գերմանական արձանագրություններում տեղ գտած հիշատակությունները, որոնք հաստատման կամ հերքման ենթակա չլինելով՝ Հայկական հարցին և հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող՝ հետզինադադարյան քննարկումների ընթացքում կարող էին ապակողմնորոշիչ և վնասակար նշանակություն ունենալ²: Ուստի հասկանալի է, որ Լ.Եփսիուսը դրանք ժողովածուից դուրս է թողել:

Բացի այդ, հենվելով իր հետազոտությունների արդյունքների վրա՝ նա կատարել է նաև փաստաթղթերում տեղ գտած մի շարք տեղագրական, ժամանակային և թվական տվյալների ճշգրտումներ, որոնք այլ նպատակ չեն ունեցել, քան ճշմարտությանը հավատարիմ մնալ և, մյուս կողմից, եղելությունների ու դրանց հետևանքների՝ փաստաթղթերից արտածվող ընդհանուր պատկերը դարձնել հնարավորինս կոտ և անխոցելի³: Կատարված բազմաթիվ այլ փոփոխություններ ունեն սույն ոճական նշանակություն և այլ՝ ավելի առարկայական միտում չեն հետապնդել⁴: Եվ վերջապես կա նաև կրճատումների մի խմբաքանակ, որն իրոք վերաբերում է եղբրական իրադարձություններին գերմանական կողմի մասնակցության խնդրին, սակայն գերազանցապես բովանդակելով բնակչության շրջանում արտահայտված ընդհանուր տեսակետներ և ենթադրություններ՝ Գերմանիայի մեղսակցության հաստատման համար հիմք դառնալ չէր կարող⁵:

Անշուշտ, միամտություն կլինեք կարծել, թե պաշտոնական Գերմանիան հայոց ցեղասպանության հարցում պատասխանատվության իր բաժինը կրելու վտանգին իրազեկ չէր, առավել ևս, երբ, ինչպես բազմիցս հաղորդում էին հյուպատոսական տեղեկագրերը, ոչ միայն Անտանտի և չեզոք երկրների, այլև թուրքական ոչ պաշտոնական քարոզչությունը ջանում էր ցեղասպանության ողջ պատասխանատվությունը բարդել Գերմանիայի վրա, և դրա դեմ ժամանակ առաջ անհրաժեշտ քայլեր չէր ձեռնարկել: Կ. Պոլսի գերմանական դեսպանությունն այդ նպատակով դեռ աքսորի շրջանում հանդես էր եկել Բ. Դոանն ուղղված մի շարք ամուլ բողոքարկումներով և նախազգուշացումներով, որոնք նպատակ ունեին փաստել Գերմանիայի անհամաձայնությունը հայ ժողովրդի զանգվածային տեղահանման առնչությամբ և միաժամանակ վկայել այն կանխելու՝ Թուրքիայի զինակցի անկարողությունը⁶: Մի շարք դիվանագիտական հաղորդագրությունների միջոցով նաև հաստատվում է, որ գերմանացի զինվորականներն ու դիվանագետները հենց միայն գերմանական կողմին հետազայում մեղսակցության մեղադրանքներից զերծ պահելու նպատակով, որպես կանոն, խուսափել են մասնակցել հայ ժողովրդի տեղահանման

² Տե՛ս ինք՝ ցանկում՝ **Gust W.**: Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke« <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>: Այդ ժողովածուում Կենն ի թիվս այլոց, թիվ 9, 15, 18, 25, 26, 99, 116, 126, 129, 132, 143, 149, 185, 193, 226, 246, 300, 306, 317, 333, 377, 425, 426, 432, 435 թղթակցությունները:

³ Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 7, 9, 10, 12, 47, 51, 165, 193, 218, 226, 279, 302, 345, 356 թղթակցությունները: Անդ:

⁴ Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 4, 15, 19, 34, 80, 114, 132, 137, 174, 176, 187, 192, 226, 242, 307, 370, 377, 405, 413, 430 փաստաթղթերը: Անդ:

⁵ Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 11, 13, 18, 129, 297, 426 փաստաթղթերը: Անդ:

⁶ Տե՛ս, ի թիվս այլոց, 106, 116, 144, 201, 215, 216, 273, 284, 417 փաստաթղթերը: Անդ:

և բնաջնջման գործողություններին, և ամենայն հավանականությամբ մահ համապատասխան հրահանգավորում են ստացել Բեռլինից:

Մյուս կողմից, ինչպես հենց ինքը՝ Գուստն է վերանայված փաստաթղթերի՝ իր կազմած ժողովածուի առաջաբանում տեղեկացնում, փաստաթղթերը, մախքան Լեփսիուսին տրամադրվելը, Գերմանիայի Արտգործնախարարության և Կ. Պոլսի գերմանական դեսպանության կողմից բազմիցս ենթարկվել էին «զտումների»⁷: Հետևապես զարմանալի չէ, որ, ինչպես ցույց է տալիս փաստաթղթերի ամբողջական ժողովածուի ուսումնասիրությունը, Լեփսիուսի տրամադրության տակ մնում էր միայն երեք՝ քիչ թե շատ առարկայական հիշատակություն ընդհանուր թվով՝ մեկ գերմանացի զինվորականի վերաբերյալ, որը մասնակցել էր հայկական կոտորածներին⁸: Խոսքը վերաբերում է մայրը կոմս Վոլֆֆոն Վոլֆսկիլին, որը, հակառակ Հալեայի հյուպատոս Ռոսկերի խիստ նախազգուշացումներին, 1915 թ. ապրիլին Այնթապում, Մարաշում և Զեյթունում այսպես կոչված «տեսչական ստուգումներ» կատարելու ժամանակ ուղեկցել էր Ֆահրի փաշային, սեպտեմբերին մրա հետ միասին մասնակցել Մուսալեղիների դեմ իրագործված ռազմական գործողություններին, իսկ այնուհետև օգնել մրան՝ ճնշելու Ուոհայի հայության ինքնապաշտպանությունը⁹:

Գրանք, անկասկած, ցեղասպանության հարցում Գերմանիայի մասնակցության և ըստ այդմ մեղսակցության հաստատման համար բավարար հիմք չէին հանդիսանում, սակայն դառնալով շահարկումների առարկա՝ կարող էին ստվերել երիտթուրքերի հանցավորության միանշանակությունը և վնասել հայ ժողովրդի հատուցմանը և հայկական հարցին վերաբերող՝ սպասվելիք բանակցագործընթացը: Մեղսակցության՝ հիմնավորման ոչ ենթակա պնդումները, բնականաբար, այլ նշանակություն չէին կարող ունենալ, քան մեղքի ստվերումը, ուստի ինքնին հասկանալի է, որ Լեփսիուսը սպասվելիք բանակցագործընթացում դա բացատելու համար իր ժողովածուից դուրս է հանել վերոնշյալ զինվորականին վերաբերող տողերը:

Ինչ վերաբերում է հիշյալ ենթախմբին պատկանող մյուս կրճատումներին, որոնք Գուստնի կողմից մնամապես մեկնաբանվում են «Գերմանիայի մեղսակցության» կոծկման միտումով, ապա դրանցից և ոչ մեկը մեղսակցության որևէ փաստացի վկայություն չէր պարունակում, այլ, ինչպես նշվեց, գերազանցապես բովանդակելով բնակչության շրջանում արտահայտված ընդհանուր տեսակետներ՝ լավագույն դեպքում հնարավորություն էր ընձեռում խնդիրը դիտարկել բարոյական շահագրգռությունների ոլորտում: Մեր համոզմամբ Լեփսիուսը ժողովածուն կազմելիս առաջնորդվել է այս՝ միանգամայն քաղաքական նկատառումներով, ինչը վկայում է մահ մրա ժողովածուի և փաստաթղթերի բնօրինակների համեմատական քննությունը, և մրա վարքագծի պայմանավորումը Գերմանիայի մեղսակցության կոծկումով կամ Գերմանիայի հանդեպ տաժած «սիրով», ամենևին իրատեսական չէ:

Ի դեպ, անհրաժեշտ են դժգոհ լինելով Լեփսիուսի կողմից հրատարակված և իր կողմից

⁷ Անդ, Vorwort...:

⁸ Անդ:

⁹ Տե՛ս թիվ 25, 188 և 193 թղթակցությունները:

վերանայված փաստաթղթերում հայկական կոտորածներին գերմանական կողմի մասնակցությանը վերաբերող փաստերի սակավությունից, Գուստը նաև այն ենթադրությունն է կատարում, որ Լեփսիուսը որոշ փաստաթղթեր, որոնք «նրա կողմից հետապնդված քաղաքական գծին» չէին համապատասխանում, գիտակցաբար ամենևին չի ներառել իր ժողովածուում¹⁰:

Այն հանգամանքը, որ ժամանակին Արտգործնախարարության կողմից Լեփսիուսին ոչ բոլոր դիվանագիտական փաստաթղթերն են մատչելի դարձվել, միանշանակորեն պարզ դարձավ դեռ հանգուցյալ ակադեմիկոս Վ. Միքայելյանի կողմից կազմված ժողովածուի հրապարակումից հետո: Ավելին, Միքայելյանի ժողովածուում ամփոփված առանձին ուշագրավ թղթակցություններ վկայում են, որ Լեփսիուսն իրեն չհանձնված մի շարք փաստաթղթերի մասին Հալեպի նախկին հյուպատոսի միջոցով իրազեկվել է միայն իր ժողովածուի հրապարակումից հետո, և որ գերմանական Արտգործնախարարությունը նույնիսկ նրա բավական հնարամիտ հիմնավորումներից հետո հրաժարվել է այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները նրան ուղարկել¹¹:

Այդ ավելի հասկանալի դարձնելու համար հարկ է մշել, որ ժողովածուի կազմման հարցում Արտգործնախարարության և Լեփսիուսի դիրքորոշումները միանգամայն տարբեր էին: Ինչպես վկայում է Արտգործնախարարության աշխատակից, գաղտնի խորհրդական Գյուպերտի՝ Լեփսիուսին ուղղված մամակներից մեկը, նախարարությանը հետաքրքրում էր ոչ միայն հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության՝ Անտանտի և չեզոք երկրների մամուլում մեծ տարածում ստացած պնդումների հերքումը, այլև, որչափ որ թուրքական կառավարության հանցավորության ներկայացումը դրան չէր նպաստում, նաև այդ հանցավորության պարտականությունը¹²: Մինչդեռ Լեփսիուսը ձգտում էր լուսաբանել հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործությունները, մերկացնել դրանց բուն կազմակերպիչներին և նպաստել հայության արդարացի հատուցմանը: Ընդ որում, Արտգործնախարարությունը բնականաբար խիստ շահագրգռված էր, որ այդ առաջադրանքը կատարեր ոչ այլ ոք, քան Լեփսիուսը, որն իբրև անձնուրաց հայանվեր գործիչ մեծ վստահություն էր վայելում ոչ միայն հայկական շրջաններում, այլև Գերմանիայի հակառակորդ երկրներում¹³: Իսկ Լեփսիուսն իր նպատակին հասնելու համար պարտավոր էր ըստ հարկի պահպանել Արտգործնախարարության հետ փոխըմբռնումը, ինչն, իհարկե, խիստ դժվար էր, սակայն ոչ անհնար, քանի որ նա իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերի միջոցով պետք է համոզվեր, որ Գերմանիայի՝ իբրև ցեղասպանության «կազմակերպիչ» կամ «մասնակցի»՝ Անտանտի երկրներում ի հայտ եկած համարումը փաստաիրավական հիմքեր չունեն, իսկ խնդրո առարկա՝ կրճատված կամ փոփոխման

¹⁰ Տե՛ս **Gust W.**: Vorwort..., Ինքնին հասկանալի է, որ «քաղաքական գիծ» ասելով՝ Վ. Գուստը նկատի ունի Գերմանիայի մեղսակցության առնչությամբ իր կողմից Լեփսիուսին վերագրվող միտումը:

¹¹ Տե՛ս այդ մասին Վ. Միքայելյանի սպառիչ պարզաբանումն իր ժողովածուի առաջաբանում, փո՛ս **Михаеля В.**, Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)..., էջ 5-6: Լեփսիուսի և գաղտնի խորհրդական Գյուպերտի միջև կատարված թղթակցությունների ամբողջական տեքստը փո՛ս անդ, էջ 603-604 և 607-608:

¹² Տե՛ս անդ, էջ 607:

¹³ Տե՛ս այդ մասին նաև ԱԳՆ-ի պարասխանաբու աշխատակցի վկայությունը: Անդ, էջ 593:

ենթարկված հատվածները, որոնք կրճատումների և փոփոխությունների ընդհանուր զանգվածի մեջ միայն մի փոքր թիվ են կազմում, կարող էին Գերմանիայի մեղսակցության հարցը լավագույն դեպքում սոսկ բարոյական հարթության վրա դիտարկելու հնարավորություն ընձեռել. հանգամանք, որի քաղաքական շահարկումները հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին կարող էին անկանխատեսելի հետևանքներ ունենալ, և որն, անկասկած, ժողովածուն կազմելիս ըստ հարկի գիտակցում և արժևորում էր մաս Լեփսիուսը: Ուստի հասկանալի է, որ մա հիշյալ հատվածները ժողովածուում չի ներառել:

Թերևս ավելորդ չէր լինի մաս նշել, որ կարծես հեռագրալով ապագայում իր ժողովածուի վերաբերյալ առանձին կասկածների առաջացման հնարավորությունը, Լեփսիուսն ինքը հարկ է համարել կատարել հետևյալ պարզաբանումը, որով վերոնշյալը լրացուցիչ ուշագրավ հիմնավորում է ստանում: Կրկին ընդգծենք, մա այդ ժամանակ պատկերացում իսկ չունեի ԱԳՆ-ի կողմից իրեն չհանձնված նյութերի մասին: «Ես ստանձնում եմ փաստաթղթերի ընտրության և Հայկական հարցի առնչությամբ գերմանական կառավարության դիրքորոշման՝ ճշմարիտ ներկայացման հետ կապված ողջ պատասխանատվությունը: Բացառելու համար ցանկացած կասկած, թե իբր ինչ-ինչ տեսանկյուններից գերմանական կառավարությանը, դեսպաններին և հյուպատոսներին կամ զանազան գերմանացի սպաների, պաշտոնյաների ու անհատների ծանրաբեռնող փաստաթղթերը կարող են իմ կողմից վանված լինել, ես դիվանագիտական փաստաթղթերի այնպիսի լիարժեք ընտրություն եմ կատարել (որոնք մաս բազմաթիվ, հարցի առնչությամբ միանգամայն աննշանակալի բյուրոկրատական նյութեր են ամփոփում), որ թղթակցությունների ներքին շարունակականությունը երաշխավորում է դրանց առարկայական ամբողջականությունը»¹⁴:

Իսկ ինչ վերաբերում էր Լեփսիուսի բուն մպատակին, այն է՝ ոճրագործությունների փաստացի լուսաբանմանը և դրանց պատասխանատուների մերկացմանը, ապա մա այդ պատշաճ կերպով կարողացավ իրագործել, չնայած թուրքական կողմին ծանրաբեռնող փաստաթղթերի առնչությամբ Արտգործնախարարության որդեգրած վերոհիշյալ դիրքորոշմանն ու դրանով պայմանավորված բոլոր խոչընդոտներին: Այն, որ Լեփսիուսն այդ հարցում ևս բավականաչափ ազատություն չէր վայելում, կարող էր վկայել, օրինակ, Գյուպերտին ուղղված նրա հետևյալ բազմանշանակ պարզաբանումը. «Ես միանգամայն անհնար եմ համարում ...փաստաթղթերից դուրս հանել կոտորածների կազմակերպիչներին վերաբերող այն ամենը, ինչը ոչ վաղուց, և ավելին, հարյուրավոր վկաների միջոցով հայտնի է դարձել...»¹⁵:

Լեփսիուսի ժողովածուի գնահատման պարագայում չի կարելի անտեսել մաս այն փաստը, որ, ինչպես պարզ է դառնում հղված և մի շարք այլ հաղորդագրություններից, Արտգործնախարարության կողմից Գյուպերտի միջոցով Լեփսիուսի վրա մեծ ճնշում էր գործադրվում՝ փաստաթղթերը Արտգործնախարարության վերոնշյալ դիրքորոշմանը համապատասխան կրճատելու կամ սրբագրելու համար, իսկ Լեփսիուսը ժողովածուի հրապարակումը չխափանելու համար պարտավոր էր գործել ԱԳՆ-ի հետ փոխըմբռնման պայմաններում, այն է՝ ըստ հնարավորին մվազ և աննշանակ զիջումների գնով

¹⁴ Stü Lepsius J., Mitteilungen, „Der Orient“, 1919, էջ 40:

¹⁵ Stü Микелеян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)..., с. 604:

փրկել կարևորագույնը: Բնակչության շրջանում Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ ի հայտ եկած տեսակետները, որոնք, ինչպես նշվեց, մեղսակցության հաստատման համար հիմք դառնալ չէին կարող և միայն կվնասեին հայկական հարցին՝ ստվերելով մեղքի միանշանակությունը, Լեփսիուսը դարձրեց այդ զիջումը՝ կարողանալով ապահովել փոխըմբռնում և հայոց եղբրական ողբերգությունները, դրանց ծրագրայնությունը, իրագործման եղանակներն ու հետևանքները միանշանակորեն փաստող՝ այդ խիստ երախտավոր գործը զլուխ բերել:

Լեփսիուսի ժողովածուի առնչությամբ ի հայտ եկող տեսակետներն ու գնահատումներն անվերապահորեն կայաթափեց, եթե անտեսեն այդ բարդ իրադրությունը, որը մա կարողացավ մեծ ջանքերի զնով և պատվով հաղթահարել: Կարելի էր ենթադրել, որ Գուստի հիշյալ տեսակետը բխել է պարզապես այդ իրողության թերաթևորումից, ինչը, սակայն, քննություն բռնել չի կարող, քանի որ մա բավականաչափ իրազեկ էր ինչպես Ա.Գ.Ն-ի կողմից Լեփսիուսին բոլոր փաստաթղթերը չհանձնելու իրողությանը, այնպես էլ ժողովածուի կազմման խնդրում Արտգործնախարարության և Լեփսիուսի դիրքորոշումների զանազանությանն ու դրա հետևանքով Լեփսիուսի համար ստեղծված ծանր իրավիճակին, որը բավական հստակ ձևակերպվել է մաս Լեփսիուսի կողմից: «Եթե ես իմձ տրված թույլտվությունը անխնա չօգտագործեի,- նշում էր Լեփսիուսը Գյուպերտի վերաբերյալ բարեկամներին ուղղված մի նկատառման մեջ,- ապա կարևորագույն փաստաթղթերի կեսն անգամ լույս աշխարհ չէր գա: Այդ գաղտնի խորհրդականը, որի հետ ես հանուն պատշաճության լավ փոխհարաբերություն էի պահպանում, միշտ փորձում էր ժողովածուից ամենակարևորը դուրս բերել, քանի որ մա ուզում էր թուրքերի մոտ լավ համարում ունենալ, զլխավոր ոճրագործներին խնայել և մաս թուրքական զեռույններին դեպահանների կեղծամների միջից սանրելով դուրս թափել»¹⁶:

Ավելորդ չէր լինի մեկ անգամ ևս նշել, որ չնայած ժողովածուի պատրաստումը, որը Լեփսիուսը հույս ուներ հրապարակել մաս անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, չխափանելու համար Լեփսիուսը պարտավոր էր գործել Արտգործնախարարության հետ փոխըմբռնման պայմաններում, սակայն չհայտնվելով կատարածուի դերում՝ մա Արտգործնախարարության լիարժեք վստահությունը երբևէ չի վայելել, և պատահական չէ, որ երբ մա ժողովածուի հրատարակումից հետո Ռուսներից տեղեկանալով իրեն չհանձնված մի շարք փաստաթղթերի մասին, Արտգործնախարարությանը խնդրեց գեթ իր անհատական իրազեկման պատճառաբանությամբ դրանք տրամադրել իրեն, միանշանակորեն մերժում ստացավ¹⁷:

Լեփսիուսի ժողովածուի առնչությամբ ի հայտ եկած մեղադրանքները, ըստ որոնց մա կրճատումներն ու փոփոխությունները կատարել է Գերմանիայի մեղսակցության կոծկման միտումով, այսպիսով միանգամայն անհիմն են և իրականությանը չեն համապատասխանում: Նրա քննադատներին իրատեսական գնահատումներ կատարելու համար ցավոք խոչընդոտել է սեփական վարկածը ցանկացած զնով, մինչև իսկ պատմական իրողությունների թյուր ներկայացման միջոցով հնարավորինս հիմնավորելի դարձնելու

¹⁶ Stfu **Gust W.**, „Magisches Viereck“...:

¹⁷ Անդ: Վմնք. անդ, էջ 607:

միտումը: Ընդ որում, այդ նպատակին հասնելու համար մրանք որպես կանոն առանձին իրողություններին անդրադառնում են՝ գիտակցաբար լուրջ մատնելով դրանց պատմական համատեքստը կամ պարզապես չտիրապետելով դրան: Այդ համատեքստից քաղում են մի դետալ և ջանում են այն մեկնաբանել այնպես, ինչպես իրենք են ուզում: Արդյունքում ստացվում է այնպես, որ պատմական իրադարձությունների համատեքստում միանգամայն պարզ և հասկանալի այդ դետալը մեկնաբանվում է կեղծ և սխալ կերպով՝ ստեղծելով միմիայն թյուրիմացություն:

Օրինակ, ինչպես գիտենք, Լեփսիուսը Հոլանդիայում գտնված ժամանակամիջոցում այնտեղից աշխատակցում էր մաս Արտգործնախարարության հետ՝ վերջինիս խնդրանքով կանոնավոր կերպով Գերմանիա ուղարկելով պատերազմին և խաղաղության հաստատման խնդիրներին վերաբերող՝ հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները: Այդ իրողությունը, որ մրան հնարավորություն էր ընձեռում իր բազմանդամ ընտանիքի ասպրուստը հայթայթելուց զատ շարունակել մաս հայօգնության աշխատանքները Գերմանիայում, արդեն բազմիցս հստակ պարզաբանում է ստացել թե՛ Լեփսիուսի, թե՛ մրա աշխատակիցների և թե՛ հետագայում մրա՝ հոլանդական տարիների գործունեության մը զբաղվող մի շարք հետազոտողների կողմից: Գուստը, սակայն, իր «Magisches Viereck» հոդվածում լուրջամբ շրջանցելով այդ առթիվ առկա տեղեկությունները՝ փորձում է Լեփսիուսի հիշյալ գործունեությունը մեկնաբանել մեծ մարդասերի կերպարին հակասող և մրան իբրև մեծապետական կուսակցական գործիչ, գործակալ և «ազգայնական» ներկայացնող շարժառիթներով: Ամենաուշագրավը, սակայն, այն է, որ մա իր պնդումը հիմնավորելու համար վկայակոչում է Լեփսիուսի և մրա «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հոգաբարձության միջև 1917 թ. գոյություն ունեցած «տեսակետների անհամապատասխանությունը» և Լեփսիուսի զխավոր ընդդիմադիր՝ ընկերության տնօրեն Ա. Ռյոդենբեքի կողմից կատարված մի հայտարարությունը, որտեղ վերջինս Լեփսիուսին անվանել էր «դավաճան»: Ընդ որում Գուստը դա վկայակոչում է առանց պարզաբանում տալու այն մասին, թե որո՞նք էին այդ անհամաձայնության դրսևապատճառները և ինչու՞ էր Ռյոդենբեքը մման հայտարարություն կատարել: Հարցը պարզ դարձնելու համար մշենք, որ Լեփսիուսի և իր ընկերության հոգաբարձության անհամաձայնությունը պայմանավորված էր առաջին աշխարհամարտի տարիներին հոգաբարձության, և մասնավորապես տնօրեն Ռյոդենբեքի՝ պետական քարոզչության պահանջներին համակերպվելու և հայ ժողովրդի եղերական դրության վերաբերյալ պատերազմի տարիներին կատարյալ լուրջում պահպանելու դիրքորոշմամբ: Ռյոդենբեքը, դրանով չսահմանափակվելով, փորձում էր կասեցնել մույնիսկ Լեփսիուսի անձնական նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ իրականացվող հայօգնության աշխատանքները և չէր խուսափում Գերմանիայի պետական քարոզչությանը հակասող՝ Լեփսիուսի հայանվեր գործունեությունը որակել որպես «դավաճանություն» հայրենիքի շահերին: Մինչդեռ, ըստ Գուստի մեկնաբանության, ստացվում է հակառակը, այն, որ Լեփսիուսը Ռյոդենբեքի կողմից դավաճան էր անվանվել հայօգնության աշխատանքներին դավաճանելու համար: Եթե Գուստն այդ փակագծերը բացեր, ապա մրա փաստարկները պարզապես կուղղվեին իր դեմ: Ուստի ինքնին հասկանալի է, որ մա կամ ամենևին հարկ չի համարել

անդրադառնալ հիշյալ «անհամաձայնության» և Ռյոդենբերգի հայտարարության բուն շարժառիթին և կամ պարզապես անտեղյակ է եղել դրան:

Մեկ այլ առիթով նա, օրինակ, նշում է, որ «որքան ավելի էր ուզվածական և քաղաքական իրադրությունը կայսերական պետության համար աննպաստ դառնում, այնքան ավելի էր Լեփսիուսի համար առաջին պլան մղվում ընդհանրապես պատերազմի բռնկման և մասնավորապես հայերի ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության խնդիրը»¹⁸: Ասվածից ինքնին բխում է, որ Գերմանիայի համար նպաստավոր ուղղափառական իրադրությունում հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության խնդիրը Լեփսիուսին առանձնապես չէր հետաքրքրում: Հանգամանք, որի հիմնավորման համար Գուստը որևէ փաստարկ չի ներկայացնում և չէր էլ կարող ներկայացնել, քանի որ դա իրականությանն ամենևին չի համապատասխանում:

Լեփսիուս մարդասերի ու հայանվեր գործչի հանդեպ անվստահության մթնոլորտ ստեղծելու նպատակով իրողությունների անգափոխման և աղճատման՝ այդ արտառոց մեթոդը, ցավոք, Գուստին չի դավաճանում նաև իր շարադրանքի հաջորդ հատվածներում՝ հասնելով մինչև իսկ անսքող անհեթեթության: «Օսմանյան կայսրությունում իր հիացումը վայելող հայերի հետ շփումների ընթացքում նրա ձեռք բերած ցավագին փորձառությունները, - նշում է Գուստը, - նրա մեջ գերմանական կայսրության փոքրամասնությունների ճակատագրի հանդեպ ըմբռնում չձևավորեցին: Երբ ժողովրդական ուժեղ ալիքը Գերմանիայում տեսանելի դարձավ, Լեփսիուսն իրեն ապահովագրեց մի ձևական փորձագիտական տեղեկագրով, որը «նրա» հայերին հոչակում էր արիներ»¹⁹:

Մեկնաբանություններն, ըստ էության, ավելորդ են: Նման հայտարարություն կատարելուց առաջ Գուստը պարտավոր էր գոնե տեղյակ լինել, որ այդ «ժողովրդական ուժեղ ալիքի» (ինչպես նա անվանում է մացիոնալ-սոցիալիզմի քաղաքական վերելքը) ի հայտ գալուց մի քանի տարի առաջ Լեփսիուսն արդեն վախճանվել էր, իսկ իր մահից հետո հայերին արիներ հոչակելու և հրեա փոքրամասնության ճակատագրով մտահոգվելու հնարավորություն չուներ: Լեփսիուսի մոտ բնականաբար գոյություն չի ունեցել նաև այդպիսի փորձագիտական տեղեկագիր, նաև դրա անհրաժեշտությունը: Ամեն դեպքում այդպիսի փաստ հայտնի չէ և չէր էլ կարող լինել:

Որոշ ժամանակ անց, սակայն, փորձելով զարգացնել այդ տեսակետը՝ Գուստը և նրա համախոհները Լեփսիուսին մեղադրեցին հակասեմիտական և աջ ծայրահեղական գաղափարներ դավանելու մեջ՝ պնդելով, որ նա հարել է գեներալ Էրիխ Լուդենդորֆի կողմից դեկավարվող աջ ծայրահեղական շրջանին, մինչդեռ այդ պնդումները նույնպես նրանց կողմից որևէ հիմնավորում չեն ստանում: Միակ իրողությունը, որով Գուստը փորձում է իր տեսակետը հիմնավորելի դարձնել, այն իրողությունն է, որ Լեփսիուսը Հոլանդիայում գտնված ժամանակամիջոցում պատերազմին և խաղաղության հաստատման խնդիրներին վերաբերող՝ հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները Գերմանիա էր ուղարկում Լուդենդորֆի գլխավոր պրոպագանդիստ Հանս ֆոն Հաեֆթեմի միջոցով, որն այդ շրջանում նույնպես Հոլանդիայում էր գտնվում: Գա հիմք է ծառայել

¹⁸ Stü Gust W., Magisches Viereck....:

¹⁹ Անդ:

Գուստին պնդելու, թե Լեփսիուսը պատկանել է Լուդենդորֆի աջ ծայրահեղական թիմին, հետևաբար մաս կալսերապաշտ է եղել և մինչև իսկ հարել է այդ թևի կողմից հովանավորվող հակասեմիտական գաղափարաբանությանը: Այս վերջին պնդումը առավել հիմնավորելի դարձնելու համար Գուստը վկայակոչում է մասնաճյուղի հանգամանքը, որ Լեփսիուսը մի առիթով Չեմբերլանդի մասին (որը համարվում է հակասեմիտական գաղափարաբանության հետևորդներից մեկը) դրվատանքով է արտահայտվել՝ անվանելով նրան «մեծ», ընդ որում որևէ փաստ չկա այն մասին, որ Լեփսիուսը Չեմբերլանդին այդպես է անվանել նրա հակասեմիտական դիրքորոշման համար: Ինքնին հասկանալի է, որ եթե պատմական գործիչների գնահատումը կատարվի այդօրինակ կոնֆլիկտների մեթոդով, առանց փաստական հիմքերի, ինչպես վարվում է Գուստը, ապա դա կհանգեցնի միայն թյուրիմացությունների²⁰: Ավելորդ է ասել, որ Լեփսիուսի համասեմիտական կողմնորոշմանը վերաբերող պնդումները չեն հիմնավորվում մասնաճյուղի հակալստիական հրապարակախոսական ժառանգության ամենամանրագին ուսումնասիրությամբ:

Այս ամենով հանդերձ, Գուստը չի կամենում հիշել, որ իր կողմից «մոլի հակասեմիտ» անվանվող Լեփսիուսը սերտորեն համագործակցել է ազգությամբ հրեա Հենրի Մորգենթաուի հետ, որն իր հուշերում Լեփսիուսի մասին բառացիորեն հետևյալն է գրել. «Ես ճանաչում եմ միայն մեկ գերմանացու, որն ինձ համար ընդունելի է: Դա Յոհաննես Լեփսիուսն է»: Գուստը չի մտաբերում մասնաճյուղի անաչին աշխարհամարտի տարիներին ազգությամբ հրեա Ալբերտ Էնշտեյնի հետ միասին «Համակիրների միության անդամ էր», որը լայն գործունեություն էր ծավալել համերաշխության հիման վրա խաղաղության հաստատման համար:

Լեփսիուսի քննադատները նրան մեղադրում են մասնաճյուղի հակադեմոկրատ և կայսերապաշտ լինելու մեջ, ինչը նույնպես կատարելապես անհիմն է: Նրանց այսպես կոչված հիմնավորումները սահմանափակվում են վերոհիշյալ այն պնդումով, որ Լեփսիուսը պատկանել է Լուդենդորֆի աջ ծայրահեղական թիմին, ինչպես և նրանով, որ նա Վայմարյան Հանրապետության ժողովրդավարությունը մի առիթով անվանել է «փափկաուկոր»: Իրականությունը սակայն, այն է, որ Լեփսիուսը ոչ միայն հակադեմոկրատ չէ, այլև մեծագույն և անգուգական դեմոկրատ է:

Երբ գերմանական գրաքննությունը 1916 թ. զանգվածային լրատվամիջոցներին և հայ ժողովրդի բոլոր գերմանացի բարեկամներին պարտադրեց հայկական հարցի և Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դրության վերաբերյալ մինչև պատերազմի վերջը կատարյալ լռություն պահպանել, բոլորը, մինչև իսկ մասնաճյուղ-հայկական ընկերություն-

²⁰ Լեփսիուսն, օրինակ, սերտ հարաբերություններ ուներ նաև Պաուլ Ռոբբախի հետ, որը նույնպես եղել է գերմանական մեծ կայսրության ջարագով: Բայց դա չի նշանակում, թե Լեփսիուսը կիսել է նրա կայսերապաշտական հայացքները: Ռոբբախը ծավալել է նաև անուրանալի հայանպասք մարդասիրական գործունեություն: Նա էր, որ Ադանայի կոյուղածների իրական պարկերը ներկայացրեց գերմանական հանրությանը, մի շարք հայ երիտասարդ հոգևորականների աջակցեց Գերմանիայում ուսանելու համար, «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության կառույցում ծավալեց մեծանշանակ հայանպասք հրապարակախոսական և կազմակերպական գործունեություն, Լեփսիուսի մահից հետո ցմահ դարձավ գերմանա-հայկական ընկերության նախագահը և նաև մեծ ներդրում ունեցավ նացիոնալ-սոցիալիզմի իշխանության փաթիլներին գերմանական ռասիզմի կողմից հայությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու հարցում:

նը լռելյայն հնազանդվեցին այդ պահանջին: Միակ բացառությունը դարձավ Յոհաննես Լեփսիուսը, որը ոչ միայն վճռականապես մերժեց կառավարության և գրաքննության՝ իրեն ուղղված պահանջը, այլև վտանգելով իր կյանքը՝ հայ ժողովրդի բնաջնջման վերաբերյալ իր հավաքած նյութերը առանձին գրքով 20 500 տպաքանակով գաղտնի հրատարակեց և նմանապես գաղտնի կերպով 500 օրինակ ուղարկեց Ռայխստագի պատգամավորներին ու զանգվածային լրատվամիջոցներին, իսկ 20 000-ը գերմանական բոլոր ավետարանական քահանայություններին՝ հանձնարարելով դրանք տարածել իրենց ծխական համայնքներում: Լեփսիուսն այդ հանդուգն ձեռնարկով նպատակ ուներ գերմանական լայն հասարակական շրջաններին իրազեկել Թուրքիայում կատարվող ոճրագործությունների մասին և հասարակայնության միջոցով ազդու ճնշում գործադրել կառավարության վրա՝ նրան հարկադրելով դիմել կոշտ միջամտության թուրքական կառավարության հայաստանի քաղաքականությունը կասեցնելու համար, բացի այդ նաև հասարակական լայն շրջաններին հավաքագրել ու ներգրավել իր կողմից ղեկավարվող հայօգնության աշխատանքներում: Համաշխարհային պատմության մեջ նման իրադրությունում դեմոկրատիայի հաղթանակի համար մղված նման անձնուրաց ու վճռական պայքարի մեկ այլ օրինակ, կարծում ենք, հնարավոր չէ գտնել:

Արժե հիշատակել, որ այդ օրերին հայ ժողովրդի դրության շուրջ բացարձակ լռություն պահպանելու՝ գերմանական կառավարության պահանջին ենթարկվեց մինչև իսկ Լեփսիուսի կողմից ստեղծված և երկու տասնամյակ անընդմեջ ղեկավարվող «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հոգաբարձությունը՝ իր հերթին, նմանապես կառավարության պահանջով ջանալով այդ լռությունը պարտադրել նաև առաջին նախագահ Լեփսիուսին: Արդյունքում վերջինս մեկընդմիջտ բաժանվեց իր ընկերությունից՝ իր հրաժարականը հիմնավորելով հետևյալ հայտարարությամբ. «Մի միսիա, որը կամենում է լռությամբ շրջանցել մի քրիստոնյա ժողովրդի մահը, որի համար մա 20 տարի գործել է, և 100 000-ավոր անմեղ կանանց ու երեխաների սովահարության դեպքում փորձում է իր հիմնական առաջադրանքը մի ինչ-որ այլ բանում տեսնել, քան նրանց փրկությունն է, այլևս այն միսիան չէ, որը ես հիմնադրել եմ»²¹:

Ծառանալով կառավարության և գրաքննության պահանջների դեմ՝ Լեփսիուսն իրեն դատապարտեց աքսորի: Տարբեր կողմերից նախազգուշացումներ ստանալով իրեն սպառնացող վտանգների մասին, միաժամանակ հայ ժողովրդի համար առավել ազատ գործելու նպատակով նա իր գրքի գաղտնի առաքումից հետո, նախքան այն հայտնի կդառնար, կարգելվեր, կհարուցեր պաշտոնական Թուրքիայի կրքոտ բողոքները, մեկնեց Հոլանդիա, որտեղ հայ գործիչների, այլ օտարազգի մեծ մարդասերների հետ միասին նվիրվեց հայ դատի պաշտպանությանը, զանգվածային լրատվամիջոցներում կատարեց հրապարակումներ հայ ժողովրդի բնաջնջման և նաև այն մասին, որ գերմանական կառավարությունը, այդ ամենի մասին տեղյակ լինելով, լռում է: Իրեն և հայ ժողովրդին դավաճանած ընկերության փոխարեն նա դեռ Հոլանդիայում ստեղծեց մի նոր ընկերություն, որի միջոցով շարունակեց հայօգնության աշխատանքները: Իրեն հավատարիմ մնացած միակ նախկին աշխատակցի՝ Ռիխարդ Թեֆերի միջոցով Գերմանիայում նույնպես հայօգնության աշխատանքներ ծավալելու, միաժամանակ իր բազմամյա ընտանիքի ապրուս-

²¹ Lepsius J., Meine Mission, ամփ, էջ 53:

տը հայթայթելու համար Լեփսիուսը, ինչպես հիշատակվեց, Հոլանդիայում գտնված ժամանակամիջոցում համագործակցում էր մաս գերմանական Արտգործնախարարության հետ՝ Գերմանիա ուղարկելով պատերազմին և խաղաղության հաստատման խնդիրների վերաբերող՝ հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները: Եթե մա գեթ չնչին իսկ չափով կայսերապաշտ լիներ, կամ եթե մույնիսկ նվազագույն չափով տուրք տար կույր հայրենասիրությանը, որի դիրքերից հանդես էր գալիս ժամանակի գրաքննությունը, ապա մա մույնպես կհամակերպվեր բոլոր մյուսների համար այլընտրանքից զուրկ թվացող իրադրության հետ:

Մենք, բնականաբար, ամենևին հակված չենք Լեփսիուսին համարելու ոչ հայրենասեր անձնավորություն: Դա մույնքան սխալ և անհեթեթ կլիներ, որքան անհեթեթ մրա հայրենասիրության շահարկումներն են: Հայրենասիրությունը, սակայն, բարոյականությանը և խղճին ծառայող այդ մեծ անհատին երբեք երկընտրանքի առաջ չի կանգնեցրել, այլ, ընդհակառակը, մրան մշտապես զորավիզ է եղել հայ ժողովրդի ողբերգությունների հանդեպ հանցավոր հանդուրժողականություն որդեգրած՝ գերմանական պետական շրջանների քաղաքականության դեմ իր պայքարում՝ ձգտելով փրկել գերմանացի ժողովրդի՝ այդ քաղաքականության հետևանքով «անարգված» արժանապատվությունը: Մենք դա վիճարկողներին կառաջարկեինք փոքր-ինչ ուսումնասիրել Լեփսիուսի կյանքն ու գործունեությունը՝ համոզվելու համար, որ իրենց մեղադրանքներն ու շահարկումները միանշանակորեն հերքելի լինելուց զատ հակասում են մաս փորձությունների, մարտահրավերների և զոհաբերումների բովում ինքնահաստատված և «հայրենասիրության փորձաքննությունը» բազմիցս, չափազանց ծանր իրավիճակներում աներկբայորեն հաղթահարած գործչի կերպարին:

Ինչևէ, հավուր պատշաճի ըմբռնելով պատմագիտության մեջ հեղաշրջիչ նորարարություն կատարելու գայթակղության ուժը, մենք, այնուամենայնիվ, Լեփսիուսի քննադատների աշխատածը ոչ միայն գիտական, այլև բարոյական համարել չենք կարող: Հայերենում կա մի ասացվածք այն մասին, որ լուից ուղտ են սարքում: Լեփսիուսի քննադատների տեսակետների ուսումնասիրությունը վկայում է, սակայն, որ մրանք ուղտը սարքել են ոչնչից, քանի որ Լեփսիուսի պարագայում անհմար է մույնիսկ լուին գտնել: Եթե այդ քննադատներին լրջորեն հետաքրքրում է հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության հարցը, որը Լեփսիուսն իբրև թե իր ժողովածուում կոծկել է, ապա մրանք կգբաղվեին ոչ թե Լեփսիուսի անձի և հասարակական-քաղաքական գործունեության անհիմն վարկաբեկմամբ, այլ առաջին հերթին այդ մեղսակցության հաստատման խնդրով, քանի որ ի տարբերություն Լեփսիուսի, մրանց առջև ամբողջովին բաց է Գերմանիայի Արտգործնախարարության քաղաքական արխիվը, և բացի այդ դա անելու համար որևէ ճնշում, խոչընդոտ կամ սահմանափակում մրանց չի սպառնում: Եթե մրանց հետաքրքրում է Գերմանիայում ազգայնական, մացիոնալ-սոցիալիստական, հակասեմիտական, հակադեմոկրատական, մեծապետական մտայնությունների պատմական ժառանգության ուսումնասիրությունը, ապա մրանք կգբաղվեին այն գործիչներով, որոնք իրոք հարել են այդ մտայնություններին, սակայն դեռ իրենց լիարժեք պատմական գնահատականը չեն ստացել:

Կարող է հարց առաջանալ, թե այդ դեպքում ինչ նպատակ է հետապնդում Լեփսիուսի անձի և գործունեության վարկաբեկումը: Քանի որ այդ մասին խոսելիս պետք է գնալ ոչ

թե փաստերի, այլ կոաֆումների ճանապարհով, ես հարկ չեմ համարում դրան անդրադառնալ: Այն հանգամանքը, սակայն, որ այդ քարոզարշավը զուրկ է հիմքերից և մասն չի ծառայում գիտության շահերին, կասկած չի կարող հարուցել: